Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 783 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ»

1.	Ծրագրի նպատակը	Նյութական և ֆինանսական օգնություն՝ հասարակության սոցիալապես անապահով շերտերին և «Էջմիածին» բժշկական կենտրոնին:
2.	Ծրագրի բարեգործական որակ-ման նպատակը	Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նախատեսվում է օգտվել հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիներ, Կալիֆոռնիա նահանգի Սիլ Բիչ քաղաքի բնակիչներ, ամերիկահայ բարեգործներ՝ տեր և տիկին Ղազարյանները և նրանց ընտանիքը՝ 3.1. Սեդա -Յունիս Ղազարեան Յունիսի (անձնագրի N AU0448316, տրված՝ 30.09.2021 թ., 001-ի կողմից) 3.2. Զուհրաբ-Բարսեղ Ղազարյան Բարսեղի (անձնագրի N AU0448317, տրված՝ 30.09.2021 թ., 001-ի կողմից)
4.	Ծրագիրը կատարողը	«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ, գտնվելու վայրը ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Պտղունք, Վարդանանց 1, հեռ. 043 500 503, թեժ գիծ՝ 20-80, հարկ վճարողի հաշվառման համար՝ 01557357
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածք, բնագավառը՝ սոցիալական

6.	Ծրագրի բյուջեն	$293500 (երկու հարյուր ինսունվերեք հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	7.1. Հայաստանի Հանրապետության մարզերի սոցիալապես անապահով կարիքավոր ընտանիքներ և հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև հիմնադրամի շահառու ընտանիքներ, ովքեր դիմում են գրասենյակ այցելությամբ՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, 7.2. փախստական ընտանիքներ, 7.3. «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի շահառու ընտանիքներ (անաշխատունակ, բազմազավակ) անհատույց տրվող ֆինանսական միջոցների անհատույց տրամադրում, 7.4. « Էջմիածին» բժշկական կենտրոն, 7.5. Երևան քաղաքի սոցիալապես անապահով կարիքավոր ընտանիքներ և հաշմանդամություն ունեցող անձինք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	9.1. բեռով բեռնված կոնտեյների ներմուծում օտարերկրյա պետությունից ՝ $205000 (երկու հարյուր հինգ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, այդ թվում ՝ 9.1.1. նյութական օգնության տրամադրում (հագուստ, կոշիկ, պայուսակ, գրենական պիտույքներ, անկողնային պարագաներ, հիգիենայի և կենցաղային պարագաներ, էլեկտրական և պարզ անվասայլակ, քայլակ, հենակ և այլն) Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի սոցիալապես անապահով

		կարիքավոր ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց և հիմնադրամի շահառու ընտանիքներին $115000 (հարյուր տասնհինգ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ , 9.1.2. 15000 (տասնհինգ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամը իրենից ներկայացնում է բեռով բեռնված կոնտեյների բեռնափոխադրման ծախսը, 9.1.3. նյութական օգնության (հագուստ, կոշիկ, կենցաղային իրեր, անկողնային պարագաներ, հիգիենայի պարագաներ, գրենական պիտույքներ և այլն) տրամադրում փախստական ընտանիքներին $40000 (քառասուն հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, 9.1.4. «Էջմիածին» բժշկական կենտրոնին նյութական օգնություն (բժշկական պարագաներ) $15000 (տասնհինգ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, 9.1.5. հիմնադրամի գրասենյակին տրամադրվող (շահառուների կենցաղակերպը բարելավելու նպատակով) ապրանքներ $20000 (քսան հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ: 9.2. «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի շահառու ընտանիքներ (բազմազավակ, անաշխատունակ) անհատույց տրվող ֆինանսական միջոցների տրամադրում $30000 (երեսուն հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 9.3. կազմակերպական ծախսերի հանրագումարը կազմում է $58500 (հիսունութ հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ՝ 9.3.1. ավտոմեքենայի շահագործման ծախսեր՝ $5500 (հինգ հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ,

		9.3.2. գրասենյակի աշխատողների աշխատավարձ՝ $40000 (քառասուն հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ՝ ներառյալ հարկերը, 9.3.3. աուդիտի իրականացում՝ $2500 (երկու հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, 9.3.4. գրասենյակային, տնտեսական ծախսեր և գույքի ձեռքբերում ՀՀ տարածքում $10500 (տասը հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ: Նշված միջոցառումներն իրականացվելու են 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայություն-ների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը նախատեսվում է՝ 10.1. բեռով բեռնված կոնտեյների ներմուծում օտարերկրյա պետությունից՝ $205000 (երկու հարյուր հինգ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, այդ թվում՝ 10.1.1 հագուստի, կենցաղային իրերի, անկողնային պարագաների, բժշկական պարագաների, խոհանոցային պարագաների, կոշիկների, հիգիենայի պարագաների, էլեկտրական և պարզ անվասայլակների, քայլակի, հենակի և այլ ապրանքների ներմուծում՝ $190000 (հարյուր իննսուն հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, 10.1.2. օտարերկրյա պետությունից ներմուծվող կոնտեյների բեռնափոխադրման ծախս՝ $15000 (տասնհինգ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, 10.2. ավտոմեքենայի շահագործման ծախսեր (բենզին, գազ, պահեստամասեր և այլն) $5500 (հինգ հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ,

		10.3. աուդիտի իրականացում՝ $2500 (երկու հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, 10.4. գրասենյակային, տնտեսական ծախսեր և գույքի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում $10500 (տասը հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը կազմակերպչական ծախսերի հանրագումարը կազմում է $58500 (հիսունութ հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ՝ 11.1. ավտոմեքենայի շահագործման ծախսեր՝ $5500 (հինգ հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, 11.2. գրասենյակի աշխատողների աշխատավարձ՝ $40000 (քառասուն հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ՝ ներառյալ հարկերը, 11.3. աուդիտի իրականացում՝ $2500 (երկու հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, 11.4. գրասենյակային, տնտեսական ծախսեր և գույքի ձեռքբերում՝ $10500 (տասը հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ:
12.	Համագործակցությունը պետա-կան կառավարման, տեղական	12.1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 12.2. Միասնական սոցիալական ծառայություն, 12.3. Տեղական ինքնակառավարման մարմիններ:

	ինքնակառավարման մարմին-ների և այլ կազմակերպու-թյունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարա-գրությունը	13.1. Ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվության ներկայացում հիմնադիր-գործադիր տնօրենին և հոգաբարձուների խորհրդին, 13.2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

08.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ